

Շ. Նազարյան, Աս. Մնացականյան

ՆԱԴԱՇ ՀՈՎՆԱԹԱՆԻ ԱՆՏԻՊ ՏԱՂԵՐԸ

Նազաշ Հովնաթանի «Բանաստեղծությունների» ժողովածուից¹ դուրս են մնացել նրա 6 տաղերը:

Անտիպ այդ տաղերը չեն պահպանվել Պետական Մատենադարանի ձեռագրերում. դրանց վերաբերյալ տեղեկություն է տալիս միայն «Աղագրական Հանդէսում» Նազաշ Հովնաթանի մասին տպագրված դրախոսությունը: Այդ դրախոսությունից, ինչպես նշված է Նազաշ Հովնաթանի «Բանաստեղծությունների» ժողովածուի առաջարանում և ծանոթագրությունների մեջ, պարզվում է, որ դրախոսող Գ. Լևոնյանն իր ձեռքի տակ ունեցել է Նազաշ Հովնաթանի մի այլ տաղարանը: Իր ժամանակին մեր պրպտուսներն այդ տաղարանը Դ. Լևոնյանի գրադարանում գտնելու ուղղությամբ՝ ապարդյուն անցան: Հետո մեզ հաջողվեց պարզել, որ Դ. Լևոնյանն այդ տաղարանը նվիրել է Գրական թանգարանին, որտեղ այն պահպանվում էր դեռևս չմշակված ֆոնդում:

Ընդօրինակելով Նազաշ Հովնաթանի այդ տաղարանի երգերը, մենք այժմ հրատարակության ենք հանձնում անտիպ մնացած վերոնշյալ 6 բանաստեղծությունները, նշելով այն մասնակի անճշտությունները, որոնք առաջացել են «Աղագրական Հանդէսում» այդ տաղերի ոչ լիարժեք նկարագրությունից:

Հայտնի է, որ Ն. Հովնաթանի բազմաբովանդակ բանաստեղծությունների մեջ զգալի կշիռ ունեն նրա երգիծական, բարոյա-խրատական երգերը: Անտիպ այս տաղերը օրգանական մասն են բանաստեղծի նենց այդ ինքնատիպ գրական ժառանգության: Գրանք, հիմնականում, ծնվել են ժամանակակից արհեստավորական խավերի միջավայրում: Նազաշ Հովնաթանը, որպես իր ժամանակի լուսավոր գործիչներից մեկը, խորապես զգացել է առևարական կապիտալի վարդաքման և փողի իշխանության նեանհրով սակեծված հակասությունները հասարակական տարրեր խավերի մեջ:

Նազաշ Հովնաթանն այս տաղերի մեջ սուր գրչով անարգում, պախարակում է խարերայությունը, ստորաքարշությունը, ձեռնաքաշությունը և նման ուրիշ բարբերը: «Վասն քսու սուտ և չարախօս մարդոյ», «Վասն ջանջալ և խարերայ մարդոյ» տաղերի մեջ բանաստեղծը հասարակական չարիք է համարում քծնող, չարակամ, ազան մարդկանց, որոնք շահից, շարստանալու տենչով կուրացած, ուզում են ժաշխարհը կուլ տալ:

Իսու, ստախոս, խարդախ և շահամոլ մարդկանց դեմ նա հանդես է բերում ազնիվ և շիտակ արհեստավորներին: Բանաստեղծը խրախուսում է

¹ Նազաշ Հովնաթան, Բանաստեղծություններ, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակություն, 1952:

² «Աղագրական Հանդէս», XXI գիրք, 1911, էջ 226—233, Գ. Լևոնյան, Աշուղը:

նրանց՝ սիրելի ազնիվ աշխատանքը, ջանասիրտությունը, հմտանալ արհեստի և գիտություն մեջ, ձգտել բարձրանալու՝ արդար աշխատանքով:

Լաւ արուեստ ուսիր	Թէ սլարապ շրջիս
Եւ շատ գիտութիւն.	Եւ լինիս հեշտ բուն,
Որ չքաշես դարդ	Քաղցած կու սաս
Եւ պահասութիւն.	Որպէս դայլ և շուն:

Նկատելի է, որ Նազաշ Հովնաթանն այս տաղերը գրելիս հատկապես նկատի է ունեցել նոր, երիտասարդ արհեստավորների, աշակերտների գաստարակութեան կարևոր խնդիրը: Բանաստեղծի ձգտումն է կղել ժողովրդին ազնիվ կերպով ծառայող արհեստավորներ պատրաստել, հեռու պահել նրանց հասարակական այլանդակ բարբերից, նրանց մեջ տարածել ժամանակի առաջավոր կուլտուրան և քաղաքակրթությունը: Այս տեսակետից ուշագրավ է Շուարուք դուք «ամենեքեան» բանաստեղծությունը: Ն. Հովնաթանն այստեղ սովորեցնում է արհեստավոր աշակերտներին՝ տանը, հասարակական վայրերում, արհեստանոցում, խնճույքում, մեջլիսում, հասակավորների, վարպետների և ուսուցիչների միջավայրում, շարժ ու ձևի, նստելու, կանգնելու, ուտել-խմելու, խոսելու, մատուցելու եղանակները, վարվեցողություն օրենքները:

Ն. Հովնաթանը մարդկանց սովորեցնում է ցանկությունների մեջ լինել չափավոր, հեռու մնալ բամբասանքներից, աննպատակ վեճերից և կոխներից, լինել մարդասեր, երաստագետ, սիրել ընկերոջը, բարեկամին, օգնել կարիքավորին և այլն:

Ով հինգ փող արար	Ի ու մէկ փող հատոյ
Առ քեզ բարութիւն,	Նմայ լաւութիւն,
Եւ թէ դու ունիս	Չլինի սովորես
Ինչ կարողութիւն,	Բշու բնութիւն:

Ն. Հովնաթանի այս տաղերը, ինչպես և նրա սիրոյ, սոցիալական բնույթի մնացած երգերը, միանգամայն զերծ են միջնադարի կրոնական նախապաշարունակներից: Այստեղ ես նա հանդես է գալիս որպես ժամանակակից կյանքը ճշմարիտ կերպով արտացոլող մեծ բանաստեղծ:

Սակայն պիտի նշել, որ Նազաշ Հովնաթանի այս և մյուս բանաստեղծություններից մի քանիսի մեջ նկատելի է աշխարհայացքային որոշ անհետեղականություն, որն արդյունք է ժամանակի հասարակական հարաբերություններից և կամ հակասությունների:

Օգտագործվող ձեռագրի մասին

Գրական թանգարան: Հայ աշուղների ֆոնդ: Փաստաթուղթ № 19, թերթեր 19: Գրված կոշա, գեղնավուն թղթի վրա, 18—19-րդ դարերի գրչութեամբ: Անկաղմ:

Ն. Հովնաթանի երգերը գանձում են այդ ձեռագրի 1ա—14ր թերթերում: 15ա—19ա թերթերում կան թվարանական փորձեր, վարժություններ և ուսերեն նշումներ:

11 ր—Թերթում գտնվում է չափածո հիշատակարանը.

«Ես տրուպ Նազաշ Յովնաթան,

Գծագրեցի գայս տաղարան...»:

Վերջին՝ 19ր թերթում՝ կարդում ենք.

«Եանք և խրատք շահաւէտ և օգտակար հոգոյ և մարմնոյ վասն տղայոց, երիտասարդաց և ծերոց, թէ որպիսի բարւոք քաղաքավարութեամբն շարժիլ պատին ի ուտելն և ի յըմպելն ի յատ և ի տուրս իւրեանց, շարադրուեալ Նազաշ Յովնաթանէ»:

Այդ ձեռագրում Նազաշ Հովնաթանի բանաստեղծութիւնները գետեղված են հետևյալ կարգով:

- 1) 1ա—1ա. Անգէտ և տգէտ
- 2) 1բ—2ա. Լուարուք դուք ամենեքեան
- 3) 2բ—3ա. Լաւ արուեստ ուսիր
- 4) 3ա—3բ. Ոմանք ի մարդոյ
- 5) 3բ—4ա. Հալալ պահօղն
- 6) 4ա—5բ. Էհտիպարի կաց
- 7) 5բ—6ա. Կսու մարդն է
- 8) 6ա—7ա. Շնորհալից մարդ կայ
- 9) 7ա—8ա. Շատ գիտուն մարդն չի ուրախանալ
- 10) 8ա—8բ. Նամուս-դայրաթի լաւ մարդն այն է
- 11) 9ա—9ա. Փնթի մարդն է քօմուրի մանդալ
- 12) 9ա—9բ. Կանանց խելքն է այն ծաղկին նման
- 13) 9բ—11բ. Ով մարդ, որ կամիս կեանքըտ երկարի
- 14) 11բ—12ա. Եղբայրք, յորժամ բազմիք սեղան
- 15) 12ա—12ա. Երկայք այսօր որդիք մարդկան
- 16) 12բ—13ա. Կաղաք ևս խաթայի Մօսկով
- 17) 13բ—13բ. Ում նման ևս արեգական
- 18) 14ա—14ա. Կատուն մեռաւ ափսոս ու ախ
- 19) 14բ—14բ. Օրհնեսցի չորէք անկիւնի տունս

Բնչպես տեսնում ենք, Գ. Լեոնյանի ձեռքի տակ եղած տաղարանում ընդգրկված են Ն. Հովնաթանի 19 երգերը, իսկ «Ազգագրական Հանդէսում» նա հիշատակում է միայն 14-ը: Դուրս են մնացել՝

1. Էհտիպարի կաց, չի հըպարտանաս (4ա—5բ)
2. Կսու մարդն է օձ և սատանայ (5բ—6ա)
3. Եկայք այսօր որդիք մարդկան (12ա)
4. Կաղաք ևս խաթայի Մօսկով (12բ—13ա)
5. Կատուն մեռաւ ափսոս ու ախ (14ա)

Այս տարբերութիւնն առաջացել է հետևյալ պատճառներով: Հոգվածագիրը նպատակ չի ունեցել երգիծական, խրատական բոլոր տաղերը նշել, որոշ տաղեր միացված է ընթերցել և տողաբանակներն էլ երբեմն սխալ հաշվել:

Այսպես, օրինակ, «Հալալ պահօղը իւր առևտուրը» երգը, ըստ տաղարանի կազմված է 14 տնից, իսկ ըստ «Ազգագրական Հանդէսի»՝ 28 տնից. Գ. Լեոնյանն այդ բանաստեղծութեան շարունակութիւնը կազմող մի այլ տաղ՝ «Կսու մարդն է օձ և սատանայ» միացրել է առաջինի հետ և կազմել 28 տուն: Այս հանգամանքը, ինչպես նաև Մատենադարանի № 7051

ձևազրի մեջ պահպանված առաջին կրգի պահասավոր տեքստը (բնգամենը 5 տուն), առաջ է բերել այն անճշտությունը, որ Ն. Հովնաթանի բանաստեղծությունների ժողովածուի մեջ (էջ 93) «Վասն ջանջալ և խարերայ մարդոյ» վերնագրի տակ նույնացվել են վերոհիշյալ երկու առանձին կրգերը:

Ն. Հովնաթանի «Բանաստեղծությունների» ժողովածուից գուրս են մնացել Երական թանգարանի տաղարանում կղած հեռույալ տաղերը.

1. Կուարուք գուք սմենեփեան

Հայրք և եղբայրք պատուական (անվերնագիր)

2. Կաւ արունեսա ուսիր և շատ գիտութիւն

Որ շրքաշես գարս և պահասութիւն... (Վասն հատուցանելոյ վերախտիս աշխատաւորաց» վերնագրով)

3. Ոմանք ի մարդոյ

Օգտեալ գանկնեցան. (Վասն կրախտամորաց մարդոյ»)

4. Հալալ պահօղն

Բւր առեաուրն... (Վասն ջանջալ և խարերայ մարդոյ»)

5. Էհախպարի կաց,

Զի հպարտանաս... (Վասն էհախպար ցուցանելոյ»)

6. Կսու մարգ [ը]ն է

Օձ և սատանայ... (Վասն քսու, սուա և չարախոս մարդոյ»)

Ստորև վեակողում ենք այդ անախպ բանաստեղծությունները, որոնք կարևոր նշանակություն ունեն մեր միջնադարյան նշանավոր բանաստեղծ Նազաշ Հովնաթանի գրական ժառանգությունն առավել հանգամանորեն ուսումնասիրելու տեսակետից:

* *

Լուարուր դուր ամենեքեան
Հայրք և եղբայրք սյստուական,
Զի սասցի բանի մի բան,
Իրբև խրատ ինչ օղաութեան:

Թէ որպէս վայել է մարդկան
Շարժիլ բողաբաւարութեան,
Թէ արտարոյ և թէ ի տան
Օտարց և բնտանեկցութեան:

Առանց մեծարանք տուն չերթաս
Եւ կամ թէ պէտք բան չունենաս,
Գուռն ծեծես և անդ մնաս,
Երբ մեծարեն՝ ի ներս գնաս:

Նախ և առաջ ուր և գնաս,
Երբ մտանես ի տուն և դարպաս,
Թէ տեսանես դարդ և սպաս,
Սնդուկ, թնկեր, ապխօր և թաս,

Եւ առ արուեստաւորքն դաս,
Որք ունին անդադներ դաս-դաս,
Զլինի աչքդ վեր համբոտնաս
Կամ նոցայ հայել կամենաս:

Մի դուցէ բնչից ձեռն տաս
Եւ կամ առնուս՝ ինչ ցանկանաս,
Թէ ցանկանաս կամ ձեռն տաս
Նորին տերօջ վիղն կուտաս:

Յորժամ թաս տաս մէջ սեղանոյն՝
Մատրդ մի ձգեր մէջ գինոյն,
Թասն կալ փոքր ինչ հեռադոյն
Ի բերանոյ գինոյ կրժոյն:

Թաս խմողին հայիր ապուշ,
Գուլին մի կենար որպէս փուշ,
Թող որ խմէ, ուտէ մէկ նուշ,
Այնժամ ասասցես թէ անուշ:

Ու՛մ ես թաս տալոյ դորացիր,
Թասն լից և մօտն կացիր,
Պատահն որ ուտէ՛ իմացիր,
Յայնժամ թասն տուր, կեռացիր:

Թէ ջուր խմես պինտ մի փնջալ,
Երբ ծիծաղիս մի խրինջալ,
Ի մէջլիսին դու մի ննջալ,
Փոքր բանի մի տրտնջալ:

Մարդիւր նստեալ կամ կանդնեալ կան,
Կամիս անցնեալ ի կողմն այն
Ձեռօք ծանոյ, որ յետ կենան,
Ապայ անցիր ի մէջ նոցայն:

Պոնծ չտաս գինչ էջ բաղնիսին,
Քանց էջ պակաս է այնպիսին,
Փեշերդ ժողվէ ի միայսին,
Որ չտաս մարդոյ երեսին:

Երբ մէջլիս գնաս՝ նստիր բաշ
Եւ մի վերին կողմն բաղտաշ,
Թէ չէ դուղայ բանց բեղ մեծ բաշ,
Կասեն. «Յած նստիր, ով անտաշ»:

Երբ մի նստիր լայն և զարեղ,
Լ՛նկերիդ տէղն թօղուլ նեղ,
Յած խօսիր փոքր և համեղ,
Թող բնկերդ էլ խօսի մէկ ծեղ:

Այլ և յորժամ բաղմիք սեղան,
Երբ բաժին ճաշն կեր միայն,
Զի գնես այն դարտակ աման
Քոյ բնկերին գէմ յանդիման:

Թէ փչէ բեղնէ գինոյ հոտ՝
Բերանդ մի տանիր մարդոյ մօտ.
Փսիես ոչ որպէս խոզ տղմոտ,
Սորտ չասես մարդոյ նենգոտ:

Գինեսերն խելաց դառնայ,
Զինչ մեղք որ ասես՝ գործէ նայ,
Ինքն իւր պակասն չիմանայ,
Երեսերն բաղցած կու մնայ:

Գինին է՛ հարիւր գիայնի,
Մէկ մարդն՝ հաղար թուամանի,
Ետտ խրմելն մարդ կու սպանի,
Գլուխ ցաւի, չի կենալ բանի:

Ամօթ է գինով մարդին
Ուժով գինի տան և ջարդին,
Մէկ տօլուն՝ տանս բինաթին
Մէկըն էլ մեր մամ Գիւլվարդին:

Տեսանես որ ծոված գտակն,
Գլուխն կոխած բարձի տակն,
Աչքն չի տեսնում մըհակն,
Բոնած է բաշբաշում փակն:

Յորժամ որ հանդիպիս մարդկան,
Որ ծածուկ գիր գրեն կարդան,
Փողի աման բիսայ բանան
Կամ մարդոյ ծածուկ ասեն բան:

Իսկ դու մի մօտենար բնդ այն,
Բնաւ մի հայիր յաւիտեան,
Մի ասեր թէ գինչ գործեցան,
Թէ չէ կասեն. «Քելաց յունայն»:

Յորժամ որ լսես ծածուկ բան
Եւ կամենաս ասել մարդկան,
Մի ասեր թէ ու՛մմէ ծնան,
Մարդիսն ասաց կամ Յովնաթան:

Երբ մարդոյ վատ ասել կամիս,
Պիտի որ աստ և անդ հայիս,
Մեղք է և հեշտ գործել շարիս,
Վարձք և դժվար գործել բարիս:

Մարդ լինի խօսում իմացիր,
 Մօտ չկանդնես, բիշ հեռացիր,
 Թէ կոխ է՝ յետս դարձիր,
 Թէ չէ կասեն վկայ կացիր:

Թէ վաճառեն ինչ պատուական
 Եւ դայն բեղ խիստ պիտեւունան,
 Շուտով առ, մի ձղեր վաղուան,
 Թէ չէ կառնին՝ կելնես փոշման:

ՎԱՍՆ ՀԱՏՈՒՅՆԵԼՈՅ ԶԵՐԱԽՏԻՍ ԱՇԽԱՏԱԻՈՐԱՅ

Լաւ արուեստ ուսիր
 Եւ շատ դիտութիւն.
 Որ չքաշես դարտ
 Եւ պակասութիւն.
 Թէ պարապ շրջիս
 Եւ լինիս հեշտ բուն,
 Քաղցած կու մնաս
 Որպէս գայլ ո՞ շուն:

Լաւ պատիւ արայ,
 Օրհնութիւնն առ,
 Որ լինիս հողով
 Եւ մարմնով պայծառ:

Քանց բեղ վարպետին
 Էվալլահ արայ,
 Վատ խօսկով շանես
 Սրտիկն եարա,
 Մի դրեղ դովեր,
 Մի կանչեր հարայ,
 Թէ չէ բեղ կասեն.
 «Այ ուզուն դարայ»:

Որդիտ խրատէ,
 Լաւ բան սորվացոյ,
 Քանի դալար է՝
 Մէջքն կեռացոյ,
 Յորժամ մեծանայ՝
 Ի տան բազմեցոյ,
 Ընդ բեղ ցնծալով
 Զնայ ուրախացոյ:

Ո՞վ որ բեղ սիրէ
 Սրտովն յարմար
 Եւ միջոք ածէ
 Ոսկեղէն կամար,
 Բայց դու էլ մեռիր
 Միշտ նորա համար,
 Եւ աշխատանք
 Բնաւ մի մոռանար:

Գիտատ փէշայիտ
 Շատ չի դարմանաս,
 Թէ հաւանեցար՝
 Այնպես կու մնաս.
 Կամբղ փոխես յորժամ
 Ղարիպ երգաս,
 Ըռաւաթ չէղնի,
 Եւնդ չը բանաս:

Ով հինգ փող արար
 Առ բեղ բարութիւն
 Եւ թէ դու ունիս
 Ե՛րբ կարողութիւն,
 Դու մէկ փող հատոյ
 Նմայ լաւութիւն,
 Զլինի սովորես
 Ըշու բնութիւն:

Քոյ ծնողացն
 Որ բեղ են պատճառ
 Եւ վարպետացըն՝
 Գործով շնորհափառ

ՎԱՍՆ ԵՐԱԽՏԱՄՈՌԱՅ ՄԱՐԴՈՅ

Ոմանք ի մարդոյ
 Օղտեալ դանկնեցան,
 Առին բազում դանձ
 Եւ հարստացան,
 Բայց մէկ փողի չափ
 Մուննաթ չիմացան,
 Մարմնով խնդացին,
 Հողով կուրացան:

Մարդ կայ՝ բնկերին
 Կուտայ ելրազան,
 Սիրէ և պատուէ
 Փառօր դանազան,
 Նայ յետ կու դառնայ
 Որպէս շար գազան.
 Սիրելոյն զլիսին
 Գոտրի դաւազան:

Հէնց զալում մարդ կա,
 Որ նորա անուան
 Դու հազար անդամ
 Եինել ես լաւ բան,
 Թէ մէկ օր ասես,
 «Սկ, օղնեա, երան»,
 Նա շատ կու փախչի
 Եւ մտնի մարան:

Պէտք եկած օրն
 Շուր դայ ետերդ,
 Կեղ մատաղ կլնի,
 Օրհնէ արեւը,
 Գալ օրն գուգէ,
 Որ կտրէ թերդ,
 Պօսիս՝ չի խօսիլ,
 Չառնել բարեւը:

Յորժամ պէտք լինիս՝
 Գուկայ աղաչէ,
 Անկանի ձեռքդ
 Եւ ոտքդ բաշէ.
 Բանէն որ պրծաւ՝
 Էլ ինչ կամաչէ.
 Գալ օրն կամի
 Որ գրեց խաչէ:

Այ բէմուրվաղ մարդ,
 Դու բնկնիս բայայ,
 Մարդոյ լաւութեան,
 Է՞ր կուտաս բաղայ.
 Լաւ մարդն է հաղիբ
 Եւ սրբած շուկայ,
 Որ պէթք եկել է,
 Սյվի պէթք դուղայ:

ՎԱՍՆ ԶԱՆԶԱԼ ԵՒ ԽԱԲԵԲԱՅ ՄԱՐԴՈՅ

Հալալ պահօղս
 Իւր առետուրն
 Նայ է մեր եղբայր,
 Սիրելի հիւրն.
 Նարաղ ջանջալին
 Վնասէ իւրն,
 Երեսն բսես
 Գործելի մուրն:

Քեզնէ փոխ կաննէ
 Հաճաթի նորրն,
 Յետոյ բեղ կուտայ
 Մակած տկճորրն:

Փոզ և աման տաս՝
 Թէ ինձ իբմին առ,
 Չի առնել, կանէ
 Այլ և այլ պատճառ.
 Փոզն կու խարճէ,
 Ամանն յետ չի տալ,
 Գու սկսանիս
 Գանկատիլ և լալ:

Նա սուտ կու գրէ
 Իւր ղէֆտար զիրն,
 Վիզն կու ձգէ
 Շարիզ բնտիրրն,
 Փոխ կաննու փոզի
 Լաւ և ընտիրրն,
 Յոտոյ բեղ կու տայ
 Հալսլ և կարմիրրն:

Կանէ աչաց ղէմ
 Ճէլ ու ֆան և ալ,
 Բանն յետ ձգէ
 Եւ կանէ էհմալ.
 Կարէ աշխարհս
 Չամել և կուլ տալ,
 Մարդիկ կու խարէ
 Կաննու, յետ չի տալ:

Խարերայ չը լինիս,
 Ային-օյինճի.
 Չասես՝ ընկերքս
 Քօտ է տեսնիլ չի,
 Գու[ք] ստեղծուած եք
 Միրոյ արարչի,
 Վասն է՞ր դու գիտես,
 Եւ նայ գիտել չի:

Վասն այն ծակ և հին
 Կու մնայ շորն,
 Եւ չի կշտանալ
 Բւր ցաւում փորն.

Անխելք մարդոյ հետ
 Չանես առ և տուր,
 Էլ չես ազատվիլ
 Գուգես հազար յետ տուր.
 Թէ ղոլվաթ է գալոյ
 Կեղ աստճոյ տուր,
 Թէ չէ՝ վաղվաղէ
 Դու կտրէ-կտուր:

ՎԱՍՆ ԷՆՏԻՊԱՐ ՑՈՒՑԱՆԵԼՈՅ

Էնտիպարի կաց,
Ձի հրպարտանաս,
Կարգայ, զիր ուսիր՝
Հեսապ իմանաս,
Ուրիշ ամանաթ
Եւ զիր շրանաս,
Աստուծով պարծեցիր,
Որ շատ մեծանաս:

Չկարգացող մարդըն
Խաւար է և կուր,
Կարգացողին միտքըն
Պայծառ է և սուր.
Իշխանաց վախիր,
Որ խօսին է հուր,
Հարրածէն փախիր,
Որ կապած է թուր:

Մարդ կայ՝ նաչար է,
Ապրանք կու ծախէ,
Գինն չի զիտել,
Խեղճ և ախմախ է.
Շատ ւժան շառնես,
Աստուծուց վախէ,
Թէ չէ զողութիւն՝
Քեզ վերայ՝ հախ է:

Ինչի բարեկամ
Ծանոթ ունենաս՝
Պիտի այնչափ աչք,
Ականճ ստանաս,
Որ ամենեցուն
Խաթրովն գնաս,
Ապայ միամիտ
Եւ անհող կենաս:

Թէ փող և տալոյ՝
Ունիս հաղիւր փող,
Քէսայիդ մէջն
Մնալն մի թող.
Ձէրայ հալալ հախ
Եւ վարձն կտրող՝
Պիղծ է քան զՅուդայ,
Մատնիչ է և զող:

Թէ կամիս շենել
Մէկ իբմին կամ թուր,
Տես թէ՛ կարող ևս,
Ապայ ձեռն տուր:

Ղուլին պէս շափէ
Ոսկուն կուլ տուր,
Թէ չէ՛ կու բսեն
Մարդոյ երես մուր:

Մէկ մարդ, որ սիրով
Քեզ ասէ. «Եղբայր,
Եկ, մէկ բան շինէ
Դու ինձի համար»,
Եթէ կարող ևս
Շուտով յանձն աս,
Թէ չէ՛ պարզ ասայ.
«Ես չեմ կարենար»:

Ձէրա քեզ ապով
Նա շատ կու մնայ,
Եւ նորա բանն
Բանէն անց կենայ,
Սիթամ և մնաս
Շատ կու քաշէ նայ,
Էլ նորայ սիրտն
Ո՛նց կու հօվանայ:

Մէկ փողի շափով
Բան լինի սահալ
Չասես բան ունիմ,
Ընկնում չէ մօհալ.
Տասն ու քսան օր
Շատ գնալ ու դալ՝
Կու կտորի մարդոյ
Իխտիար աֆալ:

Մարդ կայ՝ հազար հետ
Ապսպրես մէկ բան,
Ականջ չի զնել,
Նայ խիստ է հայփան.
Որ թոհմաթ անես
Եւ կովիս իւրնան,
Կասէ. «Չեմ բսել»
Կու կանչէ աման:

Ընկերիդ մօտ գնաս,
Աղաչես դաս-դաս,
Թէ ինձ կախում են,
Արայ ինթիմաս,
Ձի խօսիլ, զուգես
Կտրատես մաս-մաս,
Իբր թէ ասեն
Ծանր է քանց ալմաս:

Տասն մարդից հնդրես՝
Չեն շինել մէկ բան,
Որ մուխաննաթ են,
Նամարդ և եաման.
Մէկ մարդ հանդիպի,
Որ օրհնեալ է այն,
Շուտով կու հոգայ
Քոյ բանն ամենայն:

Մարդ կայ՝ հսար չի տալ
Բարեկամներուն
Եւ թօհմաթ կանէ
Թէ. «Չես դալ մեր տուն».
Լաւ է, որ ասեն
Հպարտ մեծագոյն,
Քանց թէ որ ասեն
Խիստ բէսիրաթ շուն:

Մարդ կայ, որ ցաւի
Մէկ ոչինչ տեղն,
Կով մօրդէ՝ կուտէ
Միսն և եղն,
Կասէ, թէ. «Լեղին
Յաւիս է դեղն».
Մէկ պատառ չի տալ
Ընկերի անմեղն:

Մարդ կայ, որ կասէ.
«Քեզ զրկեմ պէս-պէս
Դու ինձ հետ լաւ կաց
Եւ ինձ սիրով տես.
Քանի չար գործեմ՝
Պիտի որ ծածկես,
Յայնժամ քեզ ասեմ
Թէ դու լաւ մարդ ես»:

Կասէ. «Ինձ այսօր
Մէկ փող գէլուր դայ,
Կուղէ ընկերս
Հաղար տուգանք տայ.
Կուշտ լինիմ գովեն,
Ասեն. «Լաւ մարդ այ»,
Թող իմ ընկերն
Խեղճ, քաղցած կարդայ»:

Մէկ մեծաւորի
Որ դու հանդիպես՝
Խոնարհիր՝ մինչև
Քան դլաւն ճարես,
Քաղցր աղբիւրի
Ղատրն ոչ գիտես,
Մինչև մէկ ուրիշ
Դասն ջուր խմես:

Շշմարիտ սիրելի
Այն է սօստանայ,
Որ սուտ ասելէ
Փախչի, հեռանայ,
Իւր առևտրին
Խիստ հալալ կենայ,
Իքմին փող տալոյն
Նայ չի վախենայ:

Թէ զօնախ և հիւր
Հանդիպիս մէկ տուն,
Շատ չի յետ ընկնիս,
Անհող լինիս քուն,
Թէ չը ըսուսխաթ
Կուտան քեզ բիթիւն,
Դուրս գելնես փոշման՝
Որպէս ծեծած շու[ն]:

Այն է դրացի
Եւ լաւ հարևան,
Որ նայ քեզ օղնէ
Յաւուր նեղութեան.
Թէ չառնէ բարի
Եւ ոչ զշար բան,
Այլուր լաւ մարդ է,
Ողորմի իւրեան:

Առանց թամասուկ
Շահով փող չի տաս,
Եւ բարեկամիդ
Զամին չկէնաս.
Թէ չէ դու նաչար
Եւ աճիկ կու մնաս.
Նա կուտէ, խմէ
Կարմիր գինով թաս:

ՎԱՍՆ ՔՍՈՒ, ՍՈՒՏ ԵՒ ՉԱՐԱԽՕՍ ՄԱՐԴՈՅ

Քսու մարդ[ը]ն է
Օձ և սատանայ,
Սիրելիք միմեանց
Շուտով հանէ նայ:

Պիտի որ մարդ լաւ
Գեօգ-ղուլախ կենայ
Եւ քսու մարդէն
Փախչի, հեռանայ:

Ջէրայ քոյ վատն
 Ուրուշին կասէ
 Եւ գուգայ քեզ մօտ,
 Զնայ բամբասէ,
 Դու լաւ իմացիր,
 Որ նայ վաստասէ,
 Մատնիչ Յուդայ է,
 Քանց շուն սլակաս է:

Այնպիսի մարդն է
 Քանց մուկն ուստայ,
 Որ դրդումք ծակէ
 Եւ մէջն դուրս տայ,
 Փոխարենն ազրէ
 Եւ թողու դուրս գայ,
 Նա ոչ ամաչէ
 Եւ ոչ նամուս կայ:

Զարախօս մարդոյ մօտ
 Զը նստիս բնաւ,
 Նա մրրկեալ է
 Զետ արէկոծ նաւ,

Երբ ի նմանէ
 Ծնանի մէկ ցաւ,
 Քեզ կասեն. «Էնկեր,
 Այս քեզնէ ծնաւ»:

Երբ նորայ անհամ
 Պօսկերն լրսես,
 Կամ թերի կելնես
 Կամ կու սովորես.
 Հոգով և մարմնով
 Մեռեալ մոլոր ես,
 Յետոյ փոշմանիս,
 Գլուխդ քորես:

Խելօք մարդոյ հետ
 Շրջիր և խօսէ,
 Որ քեզ տեսնօզն
 Աֆարիմ ասէ.
 Հոգեսէր ծերոց
 Պրատն լսէ,
 Ով ոք որ լսէ՝
 Քեզ չի բամբասէ: